ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԱԽԿԻՆ ԱՇԽԱՏԱԿԻՑ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԻ ԱՆՁԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԶՄԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Դավիթ Զիլֆիմյան
ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ,
Արդարադատության ակադեմիայի ունկնդիր

Իրավագիտության մեջ «անձ» եզրութն ամենատարածված, տարբեր առումներով օգտագործվող, բազմիմաստ հասկացություններից է: Իրավաբանական բառարաններից մեկում «անձ» եզրույթը տրվում է երեք իմաստով՝ ա) մարդ, անհատականություն, բ) իրավահարաբերությունների սուբյեկտ, գ) առարկայի երևացող, դիմային կողմ[1]: Բացի այս ընդհանուր բազմիմաստությունից, կա նաև մեկ այլ յուրահատկություն, որն էլ ավելի է բարդացնում «անձ» եզրույթի իմաստային մեկնաբանության հարցը: «Անձ» հասկացությունն իրավունքի ամեն մի ճյուղում ունի յուրահատուկ, միայն այդ ոլորտին բնութագրական իմաստ: Այսպես, քաղաքացիական իրավունքում անձինք դասակարգվում են իրավաբանական և ֆիզկական տեսակների. ֆիզիկական անձը համարվում է քաղաքացիական իրավահարաբերությունների սուբյեկտ, որն օժտված է քաղաքացիական իրավունակությամբ և պարտականություններով, առանձին քաղաքացի «անհատ», որը տարբերվում է կոլեկտիվ կազմավորում համարվող իրավաբանական անձից[2]: Ակնհայտ է, որ «անձի» այս հասկացությունն անընդունելի է իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալի անձ ձևակերպման իմաստը բացահայտելու համար, որովհետև այն օգտագործող իրավական ակտերի գործողության տիրույթն իրավապահական իրավական ոլորտներն ու իրավունքի ճյուղերն են: Հետևաբար, պետք է փորձել մեզ հետաքրքող իրավական ձևակերպման հասկացությունը բացատրել իրավունքի այդ ոլորտի յուրահատկություններից ելնելով: Սակայն այստեղ ևս առաջանում է լրացուցիչ բարդություն, քանի որ իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալի անձը ժամանակագրական տեսանկյունից գոյություն ունի և իրավական ոլորտում գործում է մի քանի որակներով. նախ՝ որպես իրավապահական մարմնի աշխատակից, այնուհետև՝ որպես քրեական իրավունքի սուբյեկտ և վերջապես՝ քրեակատարողական իրավահարաբերությունների սուբյեկտ: Վերջին դեպքում այդ սուբյեկտը կարող է գտնվել երկակի իրավական վիճակում՝պայմանավորված, թե դատարանի կողմից հանցանք կատարելու համար ինչ պատիժ է նշանակվել իրավապահ մարմինների նախկին աշխատակցի նկատմամբ՝ ազատությունից զրկելո՞ւ, թե՞ ազատությունից զրկելու հետ չկապված պատժատեսակ: Թվարկված հարցադրումներն արդեն իսկ հաստատեցին, որ նույնիսկ հասարակական հարաբերությունների մեկ ոլորտում, այն է՝ իրավապահական իրավահարաբերությունների, մեզ հետաքրքող անձի հասկացությունն ունի տարբեր իմաստներ, իսկ «իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալի անձը» իրականում կարող է հանդես գալ տարբեր իրավական կարգավիճակներով, այն է՝ սահմանադրական, վարչական, քրեական, քրեակատարողական: Այստեղից էլ ձևավորվում է մեր հետազոտական խնդիրը. զանազանել մեզ հետաքրքրող «իրավապահ մար-

[1] Տե՛ս Краткий юридический словарь / под. ред. А.Н. Азрилияна.- М.; Институт новой экономики, 2005, էջ 321:

[2] Ֆիզիկական անձը որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտ կարող է լինել քաղաքացի, օտարերկրացի, քաղաքացիություն չունեցող անձ:

մինների նախկին աշխատակից դատապարտյալի անձ» հասակցության իմաստներն իրավապահական իրավահարաբերությունների ոլորտում՝ ընտրելով այդ խնդրի լուծման ճիշտ մեթոդաբանություն:

Մինչ այդ փորձենք ամփոփել հարցի տեսական հետազոտության արդի վիճակը: Այդ հարցին, որպես կանոն, անդրադառնում են կրիմինալոգիական և քրեակատարողական բնույթի հետազոտություններում: Ոլորտային ուղղվածության այս ընդհանուր հետազոտությունները հիմնականում վերլուծում են ընդհանրապես «անձ» և «հանցավոր անձ» հասակցությունները[1]: Սակավ են «իրավապահ մարմինների աշխատակիցների» կրիմինալոգիական և քրեակատարողական հիմնահարցերին նվիրված հետազոտությունները: Այս հարցում արևմտյան գիտական հետազոտությունները չեն կարող մեզ համար մեթոդաբանական հիմք լինել, որովհետև Արևմուտքի քրեակատարողական հարաբերությունների կարգավորման նորմատիվ դրույթներում չկա «իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալի անձ» հասկացությունը: Հետևաբար՝ ուսումնասիրության աշխարհագրական տիրույթ կարող են ծառայել միայն հետխորհրդային երկրներում կատարված հետազոտությունները, որովհետև ազատազրկման դատապարտված «իրավապահ մարմինների նախկին աշխատակից» անձանց այլ դատապարտյալներից անջատ պահելու ինստիտուտը նրանք ժառանգել են խորհրդային քրեակատարողական համակարգից:

ՌԴ-ում հետխորհրդային շրջանում կատարվել են մի շարք հետազոտություններ, որոնցում շոշափվում են իրավապահ մարմինների նախկին աշխատակից անձանց կամ նրանց որոշակի խմբերի կրիմինալոգիական կամ քրեակատարողական բնութագրերը: Այդ հետազոտություններից են Վ. Ա. Բրայցևայի, Դ. Ս. Սուխովի, Կ. Ա. Պրոխորովի և Ս. Ա. Ալտուխովի ատենախոսական աշխատանքները[2], որոնց գերակշիռ մասն ունի կրիմինալոգիական թեմատիկ ուղղվածություն, այսինքն՝ դրանցում վեր են հանվում և վերլուծության են ենթարկվում հանցագործություն կատարած իրավապահական մարմինների աշխատակիցների կամ դրանց առանձին խմբերի (հետաքննիչներ և քննիչներ, պետավտոտեսուչներ, միլիցիայի կամ հասարակական անվտանգության ոստիկանության աշխատակիցներ) կրիմինալոգիական բնութագրերը: Դրանց մի մասում նույնիսկ չի քննարկվում հանցագործություն կատարած իրավապահական մարմինների աշխատակիցների՝ որպես անհատների բնութագրերը, իսկ մյուսները, որոնք հետազոտման առարկա են դարձրել տվյալ խմբի հանցավոր անձանց անհատականությունը (Պրոխորով, Ալտուխով, Ֆեսունով), հարցը դիտում են միայն կրիմինալոգիական տեսանկյունից:

Ս. Ա. Ալտուխովը, վեր հանելով հանցագործություն կատարած միլիցիայի աշխատակցի կրիմինալոգիական բնութագրերը, առանձնացնում է այդ խմբի հանցավորների անհատական տիպերը[3]: Կ. Ա. Պրոխորովն անդրադառնում է կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործություն կատարած միլիցիայի աշխատակցի

---

[1] Տե՛ս **Антонян Ю.М.** Криминология. Избранные лекции. М.2004. էջ 214:

[2] Տե՛ս **Алтухов С.А.** Криминологическая характеристика и профилактика преступлений, совершаемых сотрудниками милиции. Дис. … канд. юрид. наук. Специальность 12.00.08. - Уголовное право и криминология; Уголовно-исполнительное право, Ростов-на-Дону, 2000, էջ 180; **Сухов Д.С.** Криминологическая характеристика и предупреждение коррупционных преступлений, совершаемых сотрудниками ГИБДД: по материалам Восточной Сибири: диссертация ... кандидата юридических наук : 12.00.08. Уголовное право и криминология; уголовно-исполнительное право. - Иркутск, 2009.- էջ 172; **Прохоров К.А.** Криминологическая характеристика и предупреждение преступлений, совершаемых сотрудниками милиции против жизни и здоровья: Дис. ... канд. юрид. наук : 12.00.08. Уголовное право и криминология; уголовно-исполнительное право.- Москва, 2004, էջ 186

[3] Տե՛ս **Алтухов С.А.** նշվ. աշխատությունը, էջ 111-138:

անհատական բնութագրերին, սակայն միայն կրիմինալոգիական տեսանկյունից[1]: Վ. Ա. Ֆեսունովն իր ատենախոսության մեկ գլուխը նվիրել է հանցագործություն կատարած իրավապահական մարմինների աշխատակիցների անձնական-անհատական բնութագրերին, սակայն հիմնականում անդրադարձել է նրանց կրիմինալոգիական բնութագրին, ինչպես նաև այդ անձանց անհատականության հետազոտման մեթոդիկային[2]: Նշանակում է, որ «իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալի անձ» հասկացության քրեակատարողական իմաստը դեռևս չի արժանացել ամբողջական հետազոտության: Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել նաև, որ «իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալի անձի» կրիմինալոգիական հասկացությունը չունի որևէ նշանակություն քրեակատարողական տեսանկյունից: Այսպես, Վ. Ա. Ֆեսունովը բավականին մանրամասն հետազոտում է տեսական գրականության մեջ եղած մոտեցումներն ընդհանրապես հանցավոր անձի կրիմինալոգիական հասկացության վերաբերյալ:

Անձի կրիմինալոգիական հասկացությունը, իհարկե, կարևոր է ազատազրկման դատապարտված՝ դասակարգման այլ խմբերի անձանց բնութագրելու առումով, ինչպես նաև «իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալներին» արդեն ինքնուրույն քրեակատարողական հիմնարկում պահելու տեսանկյունից, որովհետև հենց այդ բնութագիրն է դրվում պատժի կատարումը տարբերակելու ու անհատականացնելու սկզբունքի կիրառման հիմքում: Իսկ «իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալների» առանձին ազատազրկում կրելու կարգը որևէ կապ չունի այդ սկզբունքի հետ: Հետևաբար, մենք այստեղ չենք քննարկի այդ անձանց (անհատական) կրիմինալոգիական հասկացությունը և բնութագրերը, այլ կփորձենք կառուցել նոր հասկացություն՝ զուտ քրեակատարողական տեսության դիրքերից:

Կարծում ենք, որ հարցի հետազոտման մեթոդաբանական ճիշտ ուղին ընդհանրապես իրավահարաբերությունների և հատկապես քրեակատարողական իրավահարաբերությունների տեսություններն են: Քրեակատարողական իրավունքի տեսության մեջ ընդունված տեսակետի համաձայն՝ քրեակատարողական իրավահարաբերության գոյությունը պայմանավորված է իրավունքի սուբյեկտների միջև առաջացող հասարակական հարաբերությունների առկայությամբ[3]: Քրեակատարողական իրավահարաբերությունների հատկանիշներից մեկն էլ այն է, որ այն քրեակատարողական իրավունքի նորմերը տեղափոխում է սուբյեկտների՝ անհատականացված սուբյեկտիվ իրավունքների ու պարտականությունների կապի հարթություն: Այդպիսի տեղափոխում հնարավոր է իրավաբանական որոշակի փաստեր առաջնալու դեպքերում, երբ կայացվում և օրինական ուժի մեջ է մտնում պետական համապատասխան պաշտոնական փաստաթուղթը: Քրեակատարողական հարաբերության հիմնական հատկանիշներից է այն, որ դրա սուբյեկտները (մասնակիցները) յուրահատուկ են, և դրանք են պատիժները կատարող մարմիններն ու հիմնարկները, ինչպես նաև քրեական պատժի դատապարտված անձինք: Այսպիսով, քրեակատարողական իրավահարաբերությունը, ինչպես ընդհանրապես բոլոր իրավահարաբերություններն ունեն եռատար կառուցվածք՝ բովանդակություն, սուբյեկտներ և օբյեկտ[4]:

---

[1] Տե՛ս **Прохоров К.А.** նշվ. աշխատությունը, էջ 64-81.
[2] Տե՛ս **Фесунов В.А.** նշվ. աշխատությունը, էջ 14-62.
[3] Տե՛ս Уголовно-исполнительное право: В 2 т., Т. 1: Общая часть /Под общ. ред. Ю.И. Калинина. – 2-е изд., испр. и доп. Рязань: Логос; Академия права и управления федеральний службы исполнения наказаний, 2006. էջ 279
[4] Տե՛ս **Վաղարշյան Արթուր,** Պետության և իրավունքի տեսություն-2: Դասախոսություն / Հեղինակային հրատարկություն, Երևան, 2017, էջ 238-239:

Անձը՝ որպես քրեակատարողական իրավահարաբերության սուբյեկտ, քրեակատարողական իրավունքի ոլորտի տեսաբանների կողմից բնութագրվում է որպես ֆիզիկական անձ, որն ունի իրավասուբյեկտություն օրենքով իրեն վերապահված իրավունքների ու պարտականությունների շրջանակում[1]: Այդ սուբյեկտի ընդհանուր անվանում է «դատապարտյալ» ֆիզիկական անձ, որի նկատմամբ իրավաբանական ուժի մեջ է մտել դատարանի վճիռը:

Այս վերլուծությունները կարող ենք ամփոփել քրեակատարողական իրավահարաբերություններին տրված հետևյալ բնորոշմամբ. այդ իրավահարաբերությունները քրեակատարողական իրավունքի նորմերով կարգավորվող հասարակական հարաբերություններն են, որոնք բնութագրվում են քրեական պատիժների կատարման ընթացքում դրանք կատարող մարմինների, հիմնարկների և դատապարտյալների միջև առաջացող իրավունքներով ու պարտականություններով[2]: Իրավահարաբերությունների այս տարրերի վերլուծությունից հետևում է, որ դատապարտյալը՝ որպես քրեակատարողական իրավահարաբերության սուբյեկտ, ֆիզիկական, մեղսունակ օրենքով սահմանված տարիքի այն անձն է, որն օգտվում է քրեակատարողական իրավունքով իրեն վերապահված իրավունքներից ու կրում է համապատասխան պարտականություններ: Եթե այս բնորոշումը տեղայնացնենք իրավապահ մարմինների նախկին աշխատակից անձի նկատմամբ, ապա կստանանք հետևյալ հատկանիշները՝

ա) իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալը ֆիզիկական անձ է, ինչը նշանակում է, որ նա բավարարում է քրեական իրավունքում հանցագործության սուբյեկտին ներկայացվող բոլոր պահանջներն ու հատկանիշները,

բ) իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալի անձը նախկինում աշխատել է իրավապահական մարմիններից որևէ մեկում, որպես դրա աշխատակից օժտված է եղել հատուկ իրավական կարգավիճակով, ունեցել է այդ կարգավիճակից բխող համապատասխան իրավունքներ ու պարտականություններ: Հենց այս հատկանիշն է կարևոր իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալի անձի հասկացության իրավաբանական բովանդակության մեջ: Ընդ որում այդ հատկանիշի առկայությունը չունի որևէ ժամանակագրական սահմանափակում մինչև քրեակատարողական իրավահարաբերության սկիզբը: Որևէ նշանակություն չունի, թե անձը երբ, ինչքան ժամանակով է եղել իրավապահական մարմնի աշխատակից, այդպիսին էր նա հանցագործության կատրման պահին, թե ոչ: Այս բնութագրերը կարող են ունենալ նշանակություն պատժի քրեական անհատականացման համար, եթե դատարանն ունի իրավական հնարավորություն և հիմքեր՝ դա հաշվի առնելու: Այդ հատկանիշները, ինչպես նաև նշյալ անձի անհատական այլ բնութագրերը կարող են ունենալ նշանակություն ազատազրկման կատարման ընթացքում դատապարտյալի վերասոցիալականացման միջոցներն ընտրելու, բայց ոչ քրեակատարողական հիմնարկի տեսակն ընտրելու հարցում: Այսպիսով, իրավապահ մարմնի նախկին աշխատակից դատապարտյալի անձը՝ որպես քրեակատարողական իրավունքի և միայն այդ իրավունքի սուբյեկտ, բացի բոլոր դատապարտյալներին բնութագրական հատկանիշներից, ունի նաև լրացուցիչ, հատուկ հատկանիշ. անձը նախկինում աշխատել է պետության իրավապահական մարմիններից որևէ մեկում: Այդ հատկանիշը ձևական-նորմատիվային է, որի հիմքով օրենքը դատապարտյալին վերագրում է հատուկ կարգավիճակ, այն է՝ քրեակատարողական իրավահարաբերության իրացման ընթացքում այլ ազատազրկման դատապարտվածներից անջատ պահվելու իրավունք: Օրենքով սահմանված այդ

[1] Տե՛ս Уголовно-исполнительное право: В 2 т., Т. 1: Общая часть /Под общ. ред. Ю.И. Калинина. էջ 284:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 284:

ձևական հատկանիշը քրեակատարողական իրավահարաբերությունների շրջանակում ձեռք է բերում իրավական նշանակություն միայն այն դեպքում, երբ իրավապահ մարմինների նախկին աշխատակիցը դատապարտվում է ազատազրկման: Ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարման ընթացքում այս անձանց նախկին զբաղմունքը (աշխատանքը), այն է՝ նախկինում իրավապահ մարմնի աշխատակից լինելը, չունի որևէ իրավական նշանակություն: Օրենքն այդ հատկանիշին տալիս է իրավական նշանակություն միայն ազատազրկման ձևով պատիժը կատարելու դեպքում:

Իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալի անձի քրեակատարողական հատուկ, ձևական հատկանիշի հիմքում ընկած է անձի նախկինում ունեցած վարչածառայական կամ հատուկ ծառայական կարգավիճակը, այսինքն՝ ծառայությունը և աշխատանքն իրավապահական մարմիններում: Այսպիսով, քրեակատարողական հատկանիշի համար կարևոր նշանակություն ունեն իրավապահական մարմին և իրավապահական մարմնի աշխատակից հասկացությունները:

Դեռևս խորհրդային ուղղիչ աշխատանքային օրենքներն օգտագործում էին ընդհանուր հասկացություն «դատարանների և իրավապահական մարմինների նախկին աշխատակիցներ» հասկացությունը: Հետխորհրդային շրջանում անկախ պետությունների քրեակատարողական համակարգերի բարեփոխման արդյունքում ընդունված օրենքների մի մասը պահպանեց այդ ձևակերպումը: Այսպես, ՌԴ քրեակատարողական օրենսգիրքը, որն ընդունվել է 1996 թ.-ին, խորհրդային ուղղիչ-աշխատանքային օրենքների նման օգտագործում է «դատարանների և իրավապահական մարմինների նախկին աշխատակից» ձևակերպումը:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 68 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը որոշակիացնում է իրավապահ մարմինների նախկին աշխատակից անձանց շրջանակը՝ սահմանելով, որ դրա մեջ մտնում են դատարանների, իրավապահ, մաքսային և հարկային մարմինների աշխատող կամ նախկին աշխատող, պարտադիր կամ պայմանագրային զինվորական ծառայության սպայական կազմի զինծառայող կամ նախկին զինծառայող, ինչպես նաև ոստիկանության զինծառայող կամ նախկին զինծառայող դատապարտյալները:

Այս ձևակերպումն աչքի է ընկնում նրանով, որ կոնկրետացրել է իրավապահ մարմինների նախկին աշխատակից անձանց շրջանակը մաքսային և հարկային մարմինների աշխատակիցների, ինչպես նաև զինվորական ծառայության տարբեր կատեգորիաների անձանց առումով: Մյուս կողմից Քրեակատարողական օրենսգրքի 68 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում մնացել է շատ ընդհանուր «իրավապահ մարմինների աշխատող» կամ նախկին աշխատող հասկացությունը, որը, մեր կարծիքով, պարունակում է որոշակի անորոշություններ՝ պայմանավորված այն հանգամանքով, թե ինչ է իրավապահական մարմինը և հետևաբար՝ նրա աշխատակիցը: Խնդիրն այն է, որ «իրավապահական մարմիններ» հասկացությունը չունի օրենսդրական ամրագրում, իսկ տեսական գրականության մեջ տվյալ հասկացության շուրջ կան բավականին լուրջ բանավեճեր:

Կարծում ենք, որ այս հարցի լուծման ճիշտ մեթոդաբանությունը պետք է փնտրել քրեակատարողական իրավունքի տեսության մեջ: Դրա հատուկ հետազոտությամբ զբաղվել է Վ. Ա. Ֆեսունովը, որը ՌԴ իրավական համակարգի վերլուծության հիման վրա եզրակացնում է, որ ո՛չ օրենսդրության և ո՛չ էլ տեսական գրականության մեջ չկա «իրավապահական մարմին» հասկացության սպառիչ բնորոշումը, հետևաբար անորոշ է նաև դրա աշխատակից կամ նախկին աշխատակից հասկացությունը: Ինքը՝ Վ. Ա. Ֆեսունովը, «իրավապահական մարմիններ» հասկացության տիրույթի շրջանակում ընդգրկում է ներքին գործերի «ոստիկանության» մարմինները, պատժի կատարման համակարգի մարմինները, մաքսային մարմինները, անվտանգության մարմինները, ներքին զորքերը, դատարանը և դատախազությու-

նը[1]: Սակայն պետք է հաշվի առնել այն, որ այս շրջանակը բխում է ՌԴ պետական կառուցակարգում իրավապահական համակարգի կառուցվածքային առանձնահատկություններից և չի համապատասխանում ՀՀ իրավապահական համակարգի կառուցվածքին, որովհետև, որքան էլ կան ընդհանուր իրավապահական մարմիններ, կան նաև առանձնահատկություններ: Այսպես, Վ. Ա. Ֆեսունովի ուսումնասիրության շրջանակում բացակայում են քննչական մարմինները և հետևաբար դրանց աշխատակիցները, որովհետև ՌԴ-ում դրանք ընդգրկված են ներքին գործերի համակարգում: Այսպիսով, եթե փորձենք ճշտել իրավապահական մարմինների շրջանակը ՀՀ պետական կառուցակարգում, ապա պետք է կարողանանք գտնել ընդհանուր չափանիշ, ընդ որում՝ ոչ թե պետականագիտական, իրավապահական գործունեության տեսության դիրքերից, այլ քրեակատարողական համակարգի համար էական նշանակություն ունեցող հանգամանքից ելնելով:

Մեր կարծիքով, այդպիսին է այն գործառութային առանձնահատկությունը, ինչպիսին հանցավորության դեմ պայքարն է: Այդ տեսակետին է նաև պրոֆ. Յու. Մ. Անտոնյանը, որը, քննարկելով և վերլուծելով դեռևս խորհրդային վերջին շրջանում գործող օրենսդրությունը և հասնելով մինչև մեր օրերը, առաջարկում է որպես այդպիսի չափանիշ ճանաչել հանցավորության դեմ պայքարի գործառութային իրավասությունը[2]: Դա նշանակում է, որ քրեակատարողական իրավունքի տեսանկյունից այդպիսին են այն մարմինները, որոնք ունեն գործառութային որոշակի դերակատարություն հանցավորության դեմ պայքարի ողջ գործընթացում՝ սկսած օպերատիվ հետախուզական գործունեությունից ու քրեական հետապնդման հարուցման սկզբից մինչև նշանակված քրեական պատիժների կատարումը: Այս չափանիշով ղեկավարվելով՝ իրավապահական մարմինների շրջանակ պետք է ներառվեն ոստիկանությունը, ազգային անվտանգության մարմինները, քննչական մարմինները (գերատեսչական և ընդհանուր), դատախազությունը, հարկադիր կատարման մարմինները, քրեակատարողական մարմիններն ու հիմնարկները: Այս շրջանակին պետք է ավելացնել նաև Քրեակատարողական օրենսգրքի 68 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում սահմանված մնացած մարմիններն ու անձանց:

Իրավապահական մարմինների շրջանակի հարցում կողմնորոշվելուց բացի՝ կարևոր է «աշխատակից» հասկացության իմաստը:

Վ. Ա. Ֆեսունովն իրավապահական մարմինների աշխատակից անձին բնորոշում է որպես այդ մարմիններում ծառայության անցնող, հատուկ կոչում ունեցող հանցագործություն կատարած անձ[3]: Սակայն այս բնորոշման հետ համաձայնվել չի կարելի, որովհետև օրենքը չի օգտագործում ծառայող, այլ օգտագործում է «աշխատակից» հասկացությունը: Հետևաբար, քրեակատարողական տեսանկյունից հատուկ կոչման և ծառայության հատկանիշը չի կարելի համարել պարտադիր: Ուրեմն «աշխատակից» հասակցությանը պետք է տալ լայն մեկնաբանություն Քրեակատարողական օրենսգրքի 68 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի կիրառման դեպքում:

Այսպիսով, փորձենք ամփոփել.

1. «Անձ» հասկացությունն իրավագիտության մեջ բազմիմաստ է: Քրեակատարողական իրավունքի դրույթների և տեսության մեզ հետաքրքրող կողմի համատեքստում պետք է վերանալ «անձի» քրեական, կրիմինալոգիական, կրիմինալոգիական-քրեակատարողական իմաստներից և նկատի ունենալ, որ «անձն» այս իմաստով ընդամենն իրավահարաբերության սուբյեկտ է, ֆիզիկական անձ, որն ունի համապատասխան իրավասուբյեկտություն:

2. «Իրավապահ մարմնի նախկին աշխատակից դատապարտյալի անձ» հասկացությունն ունի ձևական իմաստ: Բացի ընդհանրապես դատապարտյալին բնո-

---

[1] Տե՛ս **Фесунов В.А.** նույն աշխատությունը էջ 19-20:
[2] Տե՛ս **Антонян Ю.М.** Криминология. Избранные лекции. М,2004, էջ 147:
[3] Տե՛ս **Фесунов В.А.** նշված աշխատությունը, էջ 22:

որոշ հատկանիշներից՝ օժտված է ևս մեկ լրացուցիչ, օրենքով սահմանված հատկանիշով, այն է՝ հանցագործության կատարման պահին կամ դրանից առաջ (առանց սահմանափակման) այդ դատապարտյալը եղել է օրենքով սահմանված կամ իրավապահպան այլ մարմնի աշխատակից:

3. Այդ հատկանիշն իրավաբանական նշանակություն է ձեռք բերում այն դեպքում, երբ անձի նկատմամբ, որը նախկինում կամ հանցագործության կատարման պահին եղել է իրավապահ մարմնի աշխատակից, դատարանի կողմից նշանակվում է ազատազրկման ձևով պատիժ: Մնացած պատիժների նշանակման դեպքերում այդ հատկանիշը չունի որևէ իրավաբանական նշանակություն պատժի կատարման համար, բացառությամբ անձի կրիմինալոգիական այդ առանձնահատկություններից:

4. Իրավապահպան մարմնի նախկին աշխատակիցները կամ նրան հավասարեցված անձինք ազատազրկման դատապարտվելու դեպքում ունեն իրենց պատիժն անջատ կրելու իրավունք, որին թղթակցում է քրեակատարողական ծառայության պարտականությունն ապահովել այդ իրավունքը:

5. Օրենսդրական նման կարգավորման պայմաններում քրեակատարողական իրավունքի ճյուղի ոլորտում «իրավապահ մարմնի նախկին աշխատակից դատապարտյալի անձը» կարող է ունենալ երկու կարգավիճակ՝ ընդհանուր և հատուկ: Այն դեպքում, երբ նա դատապարտվում է ազատությունից զրկելու հետ չկապված պատժի, ապա նրա իրավական դրությունը որևէ կերպ չի տարբերվում նույն բնույթի պատիժ կրող այլ անձանցից: Հակառակ պարագայում նա վերածվում է ազատությունից զրկելու հետ կապված հատուկ իրավական դրությամբ պատժի դատապարտվածի և ունի այլ դատապարտյալներից պատիժն անջատ կրելու իրավունք: Դա նրա կարգավիճակի ողջ առանձնահատկությունն է:

6. «Իրավապահպան մարմնում աշխատակցելու» ժամանակը (դրա վաղեմությունը), տևողությունը, հանցանքի կատարման պահին աշխատակից լինելու կամ չլինելու հանգամանքները կարող են ունենալ քրեաիրավական և կրիմինալոգիական նշանակություն, սակայն չունեն իրավական նշանակություն պատիժն անջատ կրելու քրեակատարողական սուբյեկտիվ իրավունքի համար: Աշխատակցելու փաստն ինքնին այդ իրավունքի ծագման հիմքն է՝ անկախ դրա ժամանակի և տեղի:

7. Ի տարբերություն իրավապահ մարմնի նախկին աշխատակից դատապարտյալի անձի «անհատականության» քրեաիրավական և կրիմինալոգիական հասկացությունների ու բնութագրերի՝ վերը նշած իմաստով այդ խմբի անձանց համար հասկացությունը նեղ է և ձևական. քրեակատարողական իրավահարաբերության մասնակից սուբյեկտ համարվող այլ դատապարտյալներից տարբերվում է մեկ ձևական հատկանիշով, այն է՝ նախկին աշխատանքի բնույթը:

ЮРИДИЧЕСКОЕ МНОГООБРАЗЫЕ ПОНЯТИЯ ЛИЧНОСТИ БЫВШЕГО СОТРУДНИКА-ОСУЖДЕННОГО ПРАВООХРАНИТЕЛЬНЫХ ОРГАНОВ

Давид Зилфимян
Соискатель кафедры уголовного права ЕГУ,
Слушатель Академии юстиции

Работа посвящена раскрытию понятия личности бывшего сотрудника-осужденного правоохранительных органов. Автор выявил и проанализировал некоторые из основных проблем, связанных с рассматриваемым понятием, и представил предложения по их решению.

LEGAL MEANING OF THE CONCEPT FOR PERSONALITY OF THE FORMER EMPLOYEE OF THE CONDEMNED LAW ENFORCEMENT OFFICERS

Davit Zilfimyan
Applicant at the YSU Chair of Criminal Law,
Trainee of Academy of Justice

The work is devoted to the disclosure of the concept for personality of a former employee of a convicted law enforcement officers. The author identified and analyzed some of the main problems associated with this concept and presented suggestions for solving them.

Բանալի բառեր – *իրավապահ մարմինների նախկին աշխատակից դատապարտյալ, դատապարտյալի անձ, հանցավոր անձ, վերասոցիալականացման միջոցներ, ինքնուրույն քրեակատարողական հիմնարկ, դատապարտյալներին անջատ պահել*
Ключевые слова: *бывший сотрудник-осужденный правоохранительных органов, личность осужденного, личность преступника, средства ресоциализации, независимое уголовно-исполнительное учреждение, отдельное содержание осужденных*
Key words: *the convicts from a former law enforcement officers, personality of the convict, the offender, means of resocialization, an independent criminal executive institution, separate maintenance of the convicts*